«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

2 փետրվարի, 2023 թ. N 18 - Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը, ինչպես նաև «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 10.4.1.7, 10.4.2 և 14.16.20 կետերը,

Հաշվի առնելով, որ ստորև նշված Պալատի անդամը վերոնշյալ իրավական հիմքերի համատեքստում այլևս չի բավարարում փորձագետ հաշվապահի՝ որպես որակավորում ունեցողի պահանջները՝ Պալատի խորհուրդը որոշում է.

1. 2023 թվականի փետրվարի 2-ից Արտակ Աշոտի Սարգսյանի (ՀԳԳՀ 3 20 0406) անդամակցությունը օրենքի ուժով համարել դադարեցված:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**